

ՄԵՍՐՈՊ-ՄԱՇՏՈՑ

(Համառոտ ակնարկ կեանքի եւ գործի մասին)

Թուակոնքեր

Յստակ չեն նշոյնիսկ թուակոնքները Մես-
րոպի կեանքի համգորուաններուն և ստիպ-
ուած՝ այս մասին եւ հարկ պիտի ըլլայ
ընդունիլ հաւանականը:

Մեսրոպի ծնունդը առհասարակ կը գրուի
353 թուականին: Արքունի գիւան մտնելու
թուականը յայտնի չէ, սակայն անկէ ելլե-
լուն և կրօնաւորելուն թուականը կը գրուի
391ին, որովհետև, ըստ կորուսի, ասուը
տարիներ անցան Մեսրոպի կրօնաւորութեան
և գիրերու գիւտի թուականներուն միջև:

Գիրի գիւտի թուականը յստակ է այլևս.
ինչ որ իրրև հաւանական կ'առաջարկուէր
բանասէրներուն կողմէ, կրնայ իրրև ստոյգ
ընդունուիլ այլևս նորայր նպասի վերջին
յօդուածի հրատարակութենէն ի վեր(*):

401 թուականը հայերէն գիրերու գիւտի
թուականն է:

Անկէ հետք, հայ գպրութեան տարա-
ծոււմը, Վրացիներու և Աղուաններու լու-
սաւորութիւնը և թարգմանական գործու-
նէսութիւնը տեւած են 35 տարիներ, այնպէս
որ Մեսրոպի կրօնաւորական կեանքը տեւած
կ'ըլլայ 45 տարիներ:

Ոսկեպար

Գիրերու գիւտէն հետք, Մեսրոպի քա-
րողական և կրթական առաքելութիւնը,
տարածուած Հայաստանի, Վրաստանի և
Աղուանից մինչև հնուաւոր գաւառները,
ստեղծեց ինչ որ պիտի կոչէինք այսօր
կովկասեան դաշնակցութիւն մը, հիմնուած
քաղաքականէն աւելի միայն և ապահով
արժէքի մը վրայ որ է մշակոյթը:

Բաւականին շեշտուած չէ՝ մինչև այսօր
բարիքը կապին. նախ երկու Հայաստան-
ներուն՝ Յունական և Պարսկական աշխարհ-
ներուն միջև, որոնք այդ դարու ոչ միայն

քաղաքական՝ այլև մշակութային կլանող
և ցուրդ հրկու հոկաներն էին, կապ մը
որ հայ գիրին և հայ գպրոցին տարածումով
ապահովուեցաւ: Մեսրոպի առաքելութեան
յաջողութիւնը Յունահայաստանի մէջ, քա-
ղեց այն սահմանը որ Յունա-պարսկական
գաշինյը իրած էր հայկական միութեան
որտին, վերածելով Հայաստանը երկու դե-
րուա նուանելի գոհերու: Հայկական նոր
գպրութեան մը ծաղկումը, խանդավառու-
թեան մը մէջ որ հրաշալիօրէն պրկեց մաս-
ւոր և հոգեոր ոյժերը ամբողջ ժողովուրդի
մը, միաձուլող կրակը եղաւ Հայ Հոգիին,
սահմաններէն վեր և սահմաններէն աւելի
զօրուոր:

Մեսրոպի անխոնջ նուանումները կը
սկսէին Վաղարշապատէն և կը վերադառ-
նային Վաղարշապատ, որ, ըլլալէ աւելի
Պարսկահայաստանի մայրաքաղաք, եղաւ
հնոցը հայ գպրութեան:

Ան նուանեց ոչ միայն հայկական միտք
ու հոգին, այլև կովկասի քրիստոնեայ երեք
ժողովուրդները, ամբողջութեան մը մէջ,
որ ապագային թոււմ պիտի կանգնէր բար-
բարու տարեկէքի նուանողական ալիքներուն
գրմաց:

Ջարմանալի թուելու աստիճան տար-
բինակ է Մեսրոպի գրմագիծը տալիսահա-
կալականս իր թափին մէջ: Ստեղծել զիրը
նախախնամական էր անատարակոյս, սակայն
երեսուն տարիներ շարունակ իր կողքին
ուսնեակ Հայոց, Աղուանից և Վրաց իշխան-
ներն ու թագաւորները, զինուորագրել գա-
նոնք իր գաղափարին, գպրոցական համա-
տարած ցանցի մը մէջ նուանել երեք եր-
կիրներ, այդ գպրոցներուն տալ արժանա-
ւոր շեկաւարներ, իր աշակերտներէն և
տակաւին քարոզչական աւելի լայն ցանցի
մը մէջ լուսաւորութեան և քրիստոնէական
նացման արշաւը յաջողութենէ յաջողու-
թիւն առաջնորդել, կենթադրէ Մեսրոպի
մէջ կամքի ամբար մը և հաւատքի խթան
մը, որ վեր է մեր երևակայութենէն: Մա-
նաւանդ երբ քիչ մը մօտէն կը դիտենք
Սահակ-Մեսրոպի անմիջական գործակից-
ներու և աշակերտներու գրականութեան
որակը՝ Ոսկեպարը:

(* Միւն, 1962 փետր. - Մարտ, էջ 39,

Ս. Կրքի քարգմանութիւնը

Ըստ Կորիւնի, Ս. Կրքի առաջին թարգմանութիւնը կատարուած է մաս առ մաս, սկսելով ինչպէս տեսանք, Առաւօսց Կիրքէն, զոր Մեսրոպ թարգմանեց Ասորիքի մէջ և գիրքերուն հետ քերու շայտտան:

Իրենց քարոզչական և կրթական գործունէութեան ընթացքին, Սահակ և Մեսրոպ Ս. Կրքէն թարգմանեցին գլխաւոր այս մասերը, որոնք պիտի ծառայէին իրենց առաքելութեան: Երբ ա շերտ և քարոզչութեան իրրէ գործիք պատրաստուած այս թարգմանութիւնը ծանօթ է մեր մատենագրութեան իրրէ առաջին քարգմանութիւն:

Անհետացած այս առաջին թարգմանութեան շուրջ վարկածներ բազմաթիւ են. ոմանք թարգմանութիւնը կատարուած կը նկատեն առորական ընագրին վրայէն և այժմու Ոսկեդարեան Աստուածաշունչին մէջ ստորական հետքերը կը նկատեն իրրէ մտարդներ առաջին թարգմանութիւնէն: Իսկ ոմանք ալ առաջին թարգմանութիւնը կատարուած կը նկատեն ուղղակի յունարէն ընագրէն, սակայն թերի ընագրի մը վրայէն և հպակեպ ու անխմամ:

Առ հասարակ ընդունուած կարծիքն է որ առաջին թարգմանութիւնը, մանաւանդ Աւետարանը, կատարուած է ստորական սշամարարած կոչուած ընագրին վրայէն, այն է Կ. դարուն ապրող Տասխեանս Ասորիին կազմած միակ Աւետարանը, որուն մէջ ձուլած էր ան չորս Աւետարանները, ընագիր մը որ տարածուած էր և գործածական Ասորիքի մէջ Կ. դարերու ընթացքին:

Մտած է երկրորդ թարգմանութիւնը և թարգմանութեան պարագաները. Սահակ և Մեսրոպ իրենց աւագ աշակերտներէն Եզնիկ Ղազարցին և Յովսէփ Պաղանցին զրկած էին Եզնիկ, առորական գրականութեան հումանայութեան և անդ ամենէն արժէքաւոր հայրախոսական մասը թարգմանելու համար: Եզնիկ և Յովսէփ, աւարտելէ ետք իրենց աշխատանքը Եզնիկի մէջ, փութացած էին Քիլիզանդին, կանխելով այնտեղ միւս երկու աշակերտները՝ Կորիւն և Ղանսօ, որոնց Սահակ և Մեսրոպ յանձնած էին յունական դպրութեան համանայութեան և անկէ թարգմանութիւններ կատարելու գործը: Ասանց

միացան նաև Յովհան Եկեղեցացի և Արձան: Եզնիկ, Յովսէփ, Կորիւն, Ղանսօ, Յովհան և Արձան վերագործած էին շայտտան թարգմանական իրենց գործերով, նիկիոյ և Եփեսոսի ժողովական կանոններով և Աստուածաշունչի վաւերական օրինակով մը: Բերուած վաւերական օրինակը Սօքրատեսինց հոչուած յունական թարգմանութիւնն է Ս. Կրքին, նկատուած կատարելագոյնը յունական բազմաթիւ թարգմանութիւններուն մէջէն:

Տակաւին մինչև այսօր յստակ չէ՛ թէ ինչո՞ւ Ոսկեդարեան հայ Աստուածաշունչը կը պարունակէ տարբերակներ Եօթանասնից յունական ընագրէն: Մտքի ամենէն մտակարար տարրութիւնը կը մնայ ենթադրութիւնը թէ թարգմանիչները չուզեցին կաշկանդուիլ միակ ընագրի մը ընթացքունակներով և ազատ զգացին բաղդատական աշխատանքով մը ընտրել լաւագոյնը առորական, յունական և հաւանաբար նաև եբրայական օրենականերու ընդմէջէն:

Ս. Կրքի երկրորդ թարգմանութեան մէջ բաժին չունի Մեսրոպ, որովհետև, ըստ Կորիւնի, գործին զուլան էր Սահակ, զբխաւոր աշխատակից ունենալով Եզնիկը: Ասկայն իր ստեղծած և ներշնչած գալորցին տրոյնքն է հայ Աստուածաշունչը, ոչ միայն իր վճիռով լեզուով և ոսկեքանգակ ոճով, այլ մտնաւանդ թարգմանական արուեստի կատարելութեամբ:

Մեր կարծիքով, Մեսրոպի բերած մեծագոյն քարիքը իր աշխարհին՝ գիրքերուն հետ և գիրքերով՝ թարգմանական հսկայ գրականութիւնը եղաւ:

Ոմանք, արժեւորումի անտեղի հասկացողութեամբ մը, կ'ամբաստանեն Ոսկեդարեան գրականութիւնը, որպէս սուուր ինքնատիպ գործերէ, քացի պատմիչներէն: Զարմանալի ըլլալու չափ միամիտ դատում երբ կը մտադուր թէ ժողովուրդը մը անգրագէտ վիճակէն դէպի գրականութեան նրբագոյն գեղեցկութիւնները անցընող կարելի միակ կամուրջը թարգմանութիւնն էր: Մանաւանդ ժամանակի յունական մշակոյթի գրական գանձին թարգմանութիւնը: Եւ թէ՛ յունական գրականութիւնը թարգմանելու համար անհրաժեշտ էր ստեղծել համապատասխան գրական լեզու մը, թարգմանուած

լեզուին նրբութեամբ և ճկունութեամբ, ինչ որ Թարգմանիչները բրին կատարեալ յաջողութեամբ:

Մի քանի տասնեակ տարիներու ընթացքին, մեզի ծանօթ մաս երեսուն անուններ հայացուցին հայրախօսական ամբողջ գրականութիւնը, Ս. Գրական մեկնութիւնները, ստուածարանական երկերը, Ճառերնախեր և Քարոզներ, որով հազիւ քրիստոնէականացած հայոց աշխարհը հազարդեցին երեք դարերու քրիստոնէական այն գրականութեամբ, որ նուաճած էր յունահռոմէական իմաստասիրող և արուեստասէր միտքը, քրիստոնէական տեսարանութեան տալով բազմակողմանի և սպասիչ ճոխութիւն մը, մշակուած պարունակութիւն մը:

Աստուածարանական և քրիստոսարանական մեծ հարցերով ալեկոծուած և զարբ մուտք գործեց նաև Հայաստան և, շնորհիւ Թարգմանիչներուն, հայ միտքն ալ փորձեց ճիշդ մը աստուածային ճշմարտութիւններուն բարձրացնելու իր հասկացողութիւնը և զանոնք կաղապարելու յստակ եզրաբանութեան մը բանաձև երուն մէջ:

Ուղորութիւն եղած է Սեկեղարու Թարգմանչական արդիւնքը բաժնիլ երկու խումբի — ասորիւնէն և յունարէնէն կատարուած Թարգմանութիւններու: Կը կարծենք թէ աւելի յստակ պատկերացում մը ունենալու համար գրական այս մեծ շարժումի տարբերութեան մասին, նախընտրելի է տեսակաւորել զայն ըստ բովանդակութեան: Այսպէսով, Սահակ—Մեհարպեան Դպրոցի ծանօթ Թարգմանութիւնները կը բաժնուին հինգ խումբերու: Ժիսական, մեկնաբանական, դաւանաբանական, իմաստասիրական և պատմագրական:

Շատ երկար պիտի ըլլար թուումը և գնահատումը նման վաստակի մը, սակայն, ընդհանուր ընդգծումի մը սահմաններուն մէջ մնալով, անհրաժեշտ է շեշտել թէ հինգ տեսակի Թարգմանութիւններուն մէջ ալ, հայացուած է ինչ որ ծանօթ էր քրիստոնէայ աշխարհին իրրև յոյն և ասորի գրականութիւն, գրեթէ ամբողջապէս:

Մեկնեցական ծէսին բացառիկ փայլ մը տալու իրենց մտահոգութեան մէջ, Սահակ և Մեհարպ նախ Թարգմանիցին և սպա

կազմակերպեցին Ս Պատարագի արարգութիւնները, հիմնուելով Ս Բարեկրի և Ս. Յովնաննէս Սեկեղարաւի պատարագներուն վրայ: Իսկ մտածագրքի կազմութեան համար, անոնք առ հասարակ օգտագործեցին ինչ որ ընդհանրացած էր Բիւզանդական թուականատարութեան մէջ, սակայն տալով միշտ հայացուած ձևին հայկական գրաձև մը: Այսպէս, Սեկեղեցին յեղուեցու հայկական մթնոլորտով մը, որ հմարիլ: Պատարագակիչ և հոգեպարար իր քաղաքականութեամբ տակաւին հեթանոսական ծեսերու գինոգութեամբ տարուած հոգիները բարձրացուց քրիստոնէական վեհ մարտնչութեամբ:

Մեկնաբանական քարգմունքիւնը ընդգրկեց զանձը հայրախօսական այն սքանչելի գրականութեան, որ մինչև այսօր տակաւին կը մնայ ամենէն մնալուն արժէքը քրիստոնէայ գրականութեան: Սեկեղեցիի մեկնութիւնը Մտաթէոսի, Պոզոսի Թուգրեան և Նսայեայ, Բարեկրի ճառերը վեցուեայ արարչութեան մասին, և փրկիմի Մեկնութիւնը Աստուածաշունչ Գրոց, ամենէն ծանօթներն են Սահակ—Մեհարպի կեղանութեան կատարուած Թարգմանութիւններէն:

Դաւանաբանական աւելի զգայուն մարզին մէջ կատարուած Թարգմանութիւնները ամբողջութեամբ հասած չեն մեզի: Պատճառը նեստորական պայքարն էր Ռիսուսի երկու բնութեանց շուրջ, պայքար մը, որուն փոթորակից ազմուկը հոռու շմայտանէն:

Նշանակաւոր յօդուածաշարքով մը Բրօֆի Ալոյնց (սէանդէս Ամսօրեայո, 1925) ի յայտ բերած է Մեհարպի և իր աշակերտներուն մասնակցութիւնը և բուն միջամտութիւնը նեստորականութեան զմմուգուած պայքարին մէջ: Այս մասին ունինք նաև Պրոկզի և Ակակի թուղթերը, ուղղուած Սահակ Կթղին և Մեհարպի:

Այս բոլոր վկայութիւններէն ի յայտ կու գայ թէ Մեհարպի ժողովի հայրերը յատկապէս վրդսովուած էին Հայաստանէն եկած լուրերէն, թէ հալածական նեստորականները ապաստան գտած էին պարսից կողմերը, պաշտպանութեան արժանացած և յանդուգն քարոզչութեան սկսած: Մտահոգիչ կը գտնելն մոլորականը նեստորի ուսու

ցի Թէոդորոս Մոպուռեւոսացիի գրութիւն-
ներուն տարածումը Հայաստանի մէջ:

Սահակ և Մեսրոպ կը պատասխանեն
Պրովկի և Ակակի թուղթերուն, վատահեց-
նելով թէ պիտի պաշտպանեն ուղղափառ
գաւանդութիւնը և թոյլ պիտի չտան որ մուս-
ուսական սերմը տարածուի իսկական հողի
վրայ:

Իացի պայքարի գրականութիւնէն, աս-
տուածաբանական - գրական սկզբնաղբեր-
ներէն թարգմանուած կան, Սահակ-Միս-
րոպեան շրջանին, Կիւրիզ Երուսաղէմացիի,
Աթանաս Հայրապետի և Գրիգոր Աճաբանի
հիշատակութիւնները: Ասանց վրայ պիտի
գային աւելնալ Պ սերունդ մը հաքք, Աղեք-
սանգիրոյ աստուածաբաններու, մասնաւոր-
աբար Գրիգորիոսի, Կիւրիզի, Քէոփրիոսի
և Տրիթակէոսի հիշատակութիւնները:

Գտակ նախասիրութիւն մը առաջնոր-
դած է ընտրութիւնը. Հայ Եկեղեցին բացու-
նշապէս կը հեռանայ Անտիոքի երկաթնակ
գաղափարներէն և Բիւզանդիոնի անասանան
վիճասիրութիւնէն, մաքուր քրիստոնէական
թիան աղբիւրը գտնելու համար Աղեքսան-
դրիան և Կապադովկեան հայրերուն մօտ,
ուր, ինչպէս կը խոստովանի Սահակ Կաթո-
ղիկոսի թուղթը, հաւատքը կը խօսի հա-
մեստ սիրոյ լեզուէն, ընդդէմ անհանգուր-
ժող իրատասիրական երբանչուս հակաճա-
նութիւններուն:

Ինասասիրական բովանդակութեամբ
թարգմանութիւնները, որոնք ձեռնօթ են
որպէս Սահակ-Միսրոպեան շրջանի գործ,
քիչ են թիւով և առաւելաբար կրօնա-բա-
րոյախօսական: Ասանց են, գլխաւորաբար:
Փրիւնի հետերն ու մեկնութիւնները, Արիս-
տիդեսայ իմաստասիրի ջատագովապանքը և
Եղիսիկ ԵՍԿԻ Ազանդոսցիին պարունակած
թարգմանութիւնները Մեթոտիոսէն:

Տարակոյսէ վեր է որ եղած են բազմա-
թիւ այլ թարգմանութիւններ աշակերտնե-
րուն կողմէ, որոնք գացին Բիւզանդիոն,
Եղեւսիա կամ Աթէնք, սակայն հասած չին
մեզի:

Կրտսեր թարգմանիչներու գործը պիտի
ըլլայ հայացնել յուն մեծ իմաստասէրները
և ստեղծել աւանձին զպրոց մը, ուր, յա-
սուկ լեզուով մը, պիտի ուսուցնասիր-

ուէին, թարգմանուէին և մեկնաբանուէին
Արիստոտէլն ու Պլատոնը:

Պատմաբանական թարգմանութիւններէն
ձեռնօթ է միայն Եւստրիոսի Քրոնիկոնը:
Հասկնալի է որ թարգմանիչները նախընտ-
րած ըլլան ըլլալ իրենց ժամանակի պատ-
մագիրները քան թարգմանիչները օտար
ժողովուրդի մը պատմութեան, որքան ալ
խորունկ ծծած ըլլային այդ ժողովուրդին
գրականութիւնն ու մշակոյթը:

Աւելորդ չըլլայ անգամ մը ևս շեշտել
յայտող, թարգմանչական այս պատկառելի
արդիւնքին մեծութեան երկու երեսները.
Կատարուած ընտրութիւնը չաւազոյն աղ-
բիւրներուն, բայց մասնաւոր գանոնք հա-
յացնելու արուեստը, պիտի ըստինք դասա-
կան յեղուի մը կաղապարին մէջ վերածուլե-
լու ներթութիւնը, որ Ոսկեդարեան թարգմա-
նիչներու Տիալոն արժէքը կը ներկայացնէ:

Վերջ

Սահակ և Մեսրոպի վերջին տարիները
խաղաղ շահցան: Սահակ կ'թղ. ստիպուե-
ցաւ դիմադրել Վառձապուհի որդի Արտա-
շէսի գէմ սարքուած դաւերուն, որոնց
մասնակից փորձեցին ընել զինքը: Այնհեր
Հայրապետի պատասխանը արժանի է վի-
պական հիւսնաներու. օջիմ փոխեր իմ տկար
գանոնուկս օտարի գայլին հետ՝ ըսու ա՛ն
այն նախարարներուն, որոնք կ'ուզէին տա-
նիլ զինք քս Տիգրան, բողոքելու Արտաշէս
թագաւորին դէմ և անոր գահընկէցութիւնը
պահանջելու համար:

Իրենց մաւրցի կուրութեան մէջ, նա-
խարարնիրը Տիգրանէն բերին գահընկէցու-
թեան երկու հրամաններ. «Ին Արշակունի
վերջին թագաւորին և միւսը՝ Լուսաւորիչ-
եան վերջին կաթողիկոսին դէմ: Առաջինին
տեղ բերին պարսիկ մարզպան մը, իսկ
կաթողիկոսին տեղ՝ ասորի Կպիսկոպոսներ:

Սահակ վից տարի ասրեցան քաշուած
կաթողիկոսական Աթոնէն, ոսկայն ոչ՝ իր
առաքելութիւնէն. «առօթից միայն պարա-
պէր և վարդապետութեան»: Բազբեանդի
մէջ ան շարունակից քարոզել և ուսուցա-
նել մինչև որ հրանդութիւնը կարճ միջոցի
մը մէջ վերջ գրաւ անոր կեանքին, Բլուր
գիւղին մէջ, ուր փոխադրուած էր վերջին
օրերուն, շրջապատուած վարդան, Հմայ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԻՆԳԱՄԷՇԻ ԳԻԻՑԱՁՆԵՐԳՈՒԹԻՒՆԸ

ՏԱԽՏԱԿ ՏԱՍՆՆԵՐԿՈՒՆԵՐՈՐԿ

1. — «Մ՛հ, այսօր ձգեցի բմբուկը ասաղ-
ձագործի տան մէջ,
2. — «՛հ, ձգեցի զայն ասաղձագործի
կնոջ մօտ, որ ինձի համար մօր մը
պէտ էր, որ զիս ծնաւ]
3. — «՛հ, ես ձգեցի զայն ասաղձագործի
ղուտարին մօտ, որ ինձի համար
պզտիկ քրոջս (նման) էր.
4. — «ի՛հա, ո՞վ պիտի բերէ բմբուկը
ստորերկրեայ աշխարհէն.
5. — «ո՞վ պիտի բերէ (բմբկի) ճարիչը⁽⁹⁵⁾
ստորերկրեայ աշխարհէն:
6. — Էնկիզուն ըսաւ անոր՝ Գիլգամէշին.
Իր սիրով.
7. — «Տէր իմ ինչո՞ւ կ'որոտասուես, ին-
չո՞ւ քու սիրտը հրահեղ է.

⁽⁹⁵⁾ Տե՛ս Ancient Near Eastern Texts, James B. Pritchard, էջ 97:

8. — այսօր պիտի հանեմ բմբուկը ստորե-
կրեայ աշխարհէն,
9. — պիտի հանեմ (բմբկի) ճարիչը ստորե-
կրեայ աշխարհէն:
10. — Գիլգամէշ ըսաւ անոր, Էնկիզուն՝
Իր ծառային.
11. — «Եթէ այսօր պիտի իջնես ստորե-
կրեայ աշխարհը.
12. — [խօսք մը պիտի խօսիմ քեզի, եւ
սեէ խօսքիս].
13. — այգարարութիւն[ներ]ուս [լաւ ու
չայրուս ըրէ]:
14. — [Մի] հագուիր մաքուր զգեստ,
15. — անոնք պիտի նկա[տեն քեզ] իրիւ
նօղեմ մը.
16. — մի օժուիր թանկագին իւզով օժա-
նելիքի տուփէն,
17. — անոր բուրումէն անոնք պիտի հա-
ւաքուին քու շուրջը.
18. — մի նետեր տապալիչու գաւազան մը
ստորերկրեայ աշխարհի,
19. — անոնք որոնք զարնուած են տապա-
լիչու գաւազանով մը. պիտի շրջա-
պատեն քեզ.
20. — Գաւազան մը մի տոներ ձեռքերուդ մէջ
21. — ոգիները պիտի զոյգզոյն քու սոջին.
22. — հողաթափներ մի հագնիր ստքերուդ.

եակ և Համագապ Մամիկոնեան երեք եզ-
բայններէն:

Իր աշակերտները և իրեն հետեղ նա-
խարարները մարմինը մեծաթափօր հանդէ-
սով տարին մինչև Տարսիս Աշտուշտ գիւղը.
Իր ծննդավայրը, ուր հանգչեցաւ ան եկե-
ղեցիին մէջ:

Մեսրոպ վեց ամիս ես շարունակեց
Սահակի հետ սկսուած գործը, Վաղարշա-
պատի մէջ, ուր և վախճանեցաւ:

Հայոց հազարապետը ուղեց որ Սուրբին
մարմինը ամփոփուի Օշական գիւղը, որ իր
սեփականութիւնն էր: Յուզարկաւորութեան
փառաւորութիւնը Մեսրոպի վաստակին չա-
փով էր, անսահման: Նախարարներ, զին-
ուորական և աւագանի, եկեղեցական բոլոր
կարգերէն ներկայացուցիչներ և ծովածաւալ
բազմութիւն մը ժողովուրդի, եկեղեցական
բեզեցողութեամբ տարին մարմինը Վաղար-
շապատէն մինչև Օշական, ուր կը մնայ
Մեսրոպի գերեզմանը մինչև այսօր:

Որքան փառաւոր, սակայն նոյնքան

տխուր եղան Սահակի և Մեսրոպի վերջին
տարիներն ու վախճանը, որովհետև վեր-
ցած էր այլևս Արշակունեաց գահը և մա-
րած Հուսուարչի սերունդը: Անկախութիւնը
փոխած էր իր զրահը և հայ ժողովուրդի
պահպանութեան և հայկականութեան զի-
նամթիւրքը փոխած էր իր մետաղը: Յու-
նական և պարսկական դարաւոր գերիշխա-
նութեան զիմաց դժուարացած էր սուրի
յեղափոխութիւնը, բայց սկսուած աւելի
լուռ, խորունկ և իրական պայքար մը, ու-
րուն զրահն էր հայոց լիզուն և սուրը՝ ազգա-
յին գիտակցութեամբ փայլած Հայու Հոգին:
Ամենէն իրական միսիթարութիւնը Աշտի-
շատի և Օշականի գերեզմաններուն զիմաց
թագաւորէ գրկուած և կաթողիկոսէ պար-
պըւած երկրին վրայ՝ Ոյրն էր պատմահայ-
րեն՝ Սորհնայիին, Ոյր մը, հայերէն զըր-
ուած առաջին պատմութիւնը պատկող, ո՞ր,
յուսահատութեանէ աւելի, ոսկմակողի նմա-
նեցաւ:

(Վերջ) A.R.A.R. @ ՇԱՀԷ ՎՐԻ. ՍՃԷՄԵԱՆ